

Վաստեթիւնների սաղմը: Դաստիարակի դործն է օգնել հնարաւո-
քութեան չափով մի քանի յատկութիւններին փարթամ զարգա-
ցումն, միւսների նոր ձեւաւորումն, երրորդների չեղօքացումն:

Բայց յաջողութեան հասնելու համար խիստ շրջահայեաց պի-
տի լինել. մանուկներին իդէալացնելը կարող է մեզ միմիայն խան-
գարել դաստիարակութեան ուղիդ ճանապարհը գտնելու:

Աիրիլ մանկան նրա բոլոր պակասութիւններով հանդերձ,
աշխատել նրան օգտակար լինել, պարտաւոր է ամեն մի դաստիա-
րակ:

Ազատ դաստիարակութեան կողմնակիցները մէկ ծայրայե-
ղութիւնից բնկնում են միւս ծայրայեղութեան մէջ. միջնադա-
րեան մանկավարժները համարելով մանկանը փչացած բնաւորու-
թիւն, իրանց տեսակի միջոցներ էին ձեռք առնում դաստիարա-
կութեան համար. ներկայումս նորագոյն գաղափարի քարոզիչները
իդէալացնելով մանկան, ձեռքից վար են դնում վերջին երկու
դարում խնամքով մշակուած դաստիարակչական գէնքերը և կաս-
կածում են զրանց օգտակարութեան վրա:


Արդ, սիրելիս, այսքանից դու կմակարերես, որ դեռ վաղա-
ժամ է գործադրել Վենտչելի առաջարկած եղանակը քո դպրոցում:

Յաջորդ անգամ ևս կդրեմ ժամանակակից դաստիարակու-
թեան մասին:

Քո նախկին ուսուցիչ.

Յգրութիւն.

2-ն Յունուարի



Ե Ր Կ Ո Ւ Ե Ղ Բ Ա Յ Ր

Դպրոցական Կեանքից (2. էջերախ)

(Вѣстникъ Воспитанія № 8)

II

Կենդանորֆը վերադարձաւ իր փոքր, երիտասարդական
ամուրիի բնակարանը, որ բաղկացած էր երկու սենեակից: Ճա-
շակով տապակած միսը, հեան էլ թունդ սուրճը նորան այն-
քան թարմացրին, որ նա զգալով իրան կազդուրուած, վերին
աստիճանի գոհ, նստաւ գաշնամուրի առաջ և սկսեց նուագել
«Մենդելսոնի» մարշը:

Գուռը ծեծեցին. բայց այնպէս թոյլ, որ նա սկզբում չը հաւատաց իր ահանջներին, կարծելով թէ սխալուում է և որպէս զի համոզուի մօտեցաւ դռանը:

Ներս մտաւ երեխան լացած աչքերով:

— Ինչի՞ համար ուշացար:

— Ես արդէն մի անգամ եկել եմ, պատասխանեց տղան, բայց տանտիկինը տանը չէր և մարդ չը կար, որ տետրակները յանձնէի:

— Միայն նոր նկատեց Կենիգսդորֆը տղայի լացած աչքերը:

— Մարտին, այդ ի՞նչ է պատահել քեզ, ինչո՞ւ ես լաց եղել:

— Տետրակները . . . տետրակները, հեկեկալով պատասխանեց տղան. և դրեց սեղանի վերայ մեծ ծրարը:

— Աստուած՛ի իմ, վախեցածի պէս բացահանչեց Կենիգսդորֆը առնելով աշակերտական տետրակները, որոնցից մի քանիսը բոլորովին ցեխոտուած էին:

— Այս ի՞նչ ես արել:

— Մեղաւորը ես չեմ, շարունակեց լացը երեխան՝ աշխատելով ցեխոտած տետրակների կեղտը ձեռքով մաքրել:

— Թո՛ղ, աւելի կը կեղտոտես. միթէ թղթով չէ՞իր փաթաթել:

— Ի՞նչպէս չէ. բայց Շ. փողոցի անկիւնում մեծ Մերկը յանկարծ իմ վերայ թռաւ և տետրակները ցեխը ընկան:

— Կընչանակէ՞ մեղաւորը Մերկն է. տխուրթեամբ բացահանչեց Կենիգսդորֆը ջնկելով տետրակներից մաքուրները ու մի կողմ դնելով. իսկ կեղտոտածները շարում էր սեղանի վերայ չորանալու:

— Այո՛, Մերկը:

— Բոլորը վազելով ընկած էին նրա յետևից:

— Ո՞վքեր էին վազողները:

— Ուրիշ երեխաներ:

— Ինչո՞ւ համար:

— Ուզում էին նրան ըռնել:

— Քանի՞ հոգի կը լինէին:

— Մօսաւորապէս քսան:

Ուսուցիչը սկսեց տետրակների միջից հանել ցեխոտած ծողականները:

— Քսան հոգի մէկի յետևից. լաւ բան է. բացահանչեց մի քանի բոպէ անցնելուց յետոյ:

— Իսկ ո՞վքեր էին նրանք:

— Փօգելը, Կառլֆմանը, Կօնդրատին:

— Հա՛, ի հարկէ և նա . . . իսկ յետո՛յ ինչ եղաւ:

— Ինչպէս ասացի, նրանք բոլորը ընկած էին նրա քամա-

կից, և երբ անկիւնից ծռուեց, այն ժամանակ յարձակուեց ինձ վրայ և . . .

— Եւ տետրակները ցեխը ընկան .

— Այո՛, բայց ես չեմ մեղաւորը, նորից հեկեկաց Մարտինը:

— Այոք չի ասում, թէ մեղաւորը դու ես. բայց դրանից ես ի՞նչ չեմ յարձակուել քո վրայ, որ լալիս ես. քեզ պէս մեծ աղաչին ամօթ չէ՞ լաց լինել: Մաքրիր, մաքրիր աչքերդ, ամօթ է:

Մարտինը գրպանից հանելով մեծ մաքուր թաշկինակը սրբեց երեսը. ապա ուժով քիթը վեր քաշեց ու յանկարծ նստեց, սկսեց լալ:

— Ահա՛, այդպէս. այժմ համարիր տետրակների կողքերի սպիտակ մօտեռներից քանի՞նք են ցեխոտուել:

Մարտինը սիրտը հանգստացրած սկսեց եռանդով համարել. «ասան և ութը»:

— Երկու տետրակ բոլորովին վիչացել է. ծծողականներից միայն մի քանիսը:

— Մարտին. Ոօրբի գրալամճառանոցը. գիտե՞ս:

— Գիտեմ .

— Ահաւասիկ քեզ վտղ, գնա՛, գնիր երկու վայելչագրու-թեան տետրակ № 2. երկու դիւժին ծծողական և երկու դիւժին էլ մօտեռներ (եարլիկներ). միայն աշխատիր շուտ վերագառնալ ասին:

— Ինչպէ՞ս տեսնում ենք, այս երեկոն ուսուցչի համար տխուր չանցաւ, դրա մասին մտածել էր աւագ Մերկը: Կենդանուհի, որչափ հնարաւոր էր, մաքրում, չորացնում էր. ցեխոտած տետրակներից պոկում էր անմաքուր մօտեռները ու կըրպցնում էր նրանց փոխարէն նսրերը:

Մօտաւորապէս ժամը եօթին սանդուխքի առտիճանների վրայ լսուեց սաի ձայն:

Դա տանտիկնոջ որդին էր, որը երեւի գործ չուներնալու պատճառով, սովորականից աւելի շուտ էր ազատուել: Կենդանուհի ձայն տալով նրան հարցրեց:

— Ֆերզինանդ, գիտե՞ս, սրտեղ է ապրում Մերկը:

— Այո՛, պարոն ուսուցիչ:

— Խնդրում եմ, գնա՛ նրա մօտ և, եթէ տանը կը լինի, ասա՛, որ ես անպատճառ խնդրեցի, որ ինձ մօտ գայ:

Հէնց այդ բոլորէն սանդուխի վրայ երեւցաւ Ֆերզինանդի մօտը, այրի կընէ:

— Տիկին, դուք հակառակ սչինչ չուներ, եթէ ձեր որդին իսկոյն կատարէ իմ թեթեւ յանձնարարութիւնը, հարցրեց նրան ուսուցիչը:

— Ի հարկէ՛ ս'չ. պ. Կենիդսդօրֆ, գուք այնքան գրքեր էք նուիրում նրան, որ նա ամենայն ուրախութեամբ պէտքէ կատարէ մի այդպիսի շնչին յանձնարարութիւնս:

— Վերջին նուիրած գիրքը ինձ շատ դուր եկաւ, ասաց Ֆերդինանդը և ուրախ ուրախ թռչկոտելով սանդուխի աստիճաններէ վերեւից վայր իջաւ:

Քառորդ ժամ չանցած նա կտորուած սրտով, ինչպէ՛ս վիրաւորուած վերադարձաւ:

— Ֆերդինանդ, Մերկին տես՞ր:

— Ֆերդինանդը շփոթուած ժպտաց. այո՛, բայց նա ասանք չէր:

— Ո՞րտեղ տեսար:

— Նա գինետուն էր գնում, երբ ես պատահեցի նրան և ձեր խօսքերը յայանեցի:

— Իսկ նա ի՞նչ ասաց:

— Նա . . . նա ասաց . . .

— Ֆերդինանդը սկսեց հազալ— գլխարկի հետ խաղալով:

— Նա ասաց.

— Եթէ ես իրան պէտք եմ, թող ինքը գայ ինձ մօտ:

— Տիրեց փոքր ինչ լուրթիւն. սպա Կենիդսդօրֆը հարցրեց. չը ինի՞ թէ հարբած էր:

— Նա միշտ էլ բանթողից յետոյ հարբում է. երէկ գինետանը նրա երեսը սև ներկով մի լաւ օծել էին, իսկ բոլոր երեխաները ընկած էին նրա յետեւից:

— Շնորհակալ եմ, Ֆերդինանդ, կարող էք գնալ:

Հագնելով վերարկուն ու գլխարկը ծածկելով Կենիդսդօրֆը գնաց քաղաք ընթրելու:

— Յանկարծ նա կանգ առաւ. և ի՛նչ. փողոցի միւս կողմում կանդնած էին երկու Մերկերը. եղբայրները հագած ունէին երկար վարտիք. գլխարկ ամենևին չունէին ծածկած. խիստ գունատի գէմքերով, ցրտից բոլորովին կապտած:

Առաջին հայեացքից զրդուած Կենիդսդօրֆը կամեցաւ ձայն տալ նրանց, բայց յետոյ զղջաց. միայն կանդնած մտածում ու հեռեւում էր նրանց:

Երեխաները քամակները դէմ տաւած պատին կարծես մտազիր էլ չէին շարժուել, բայց մի քանի ըոպէ անցնելուց յետոյ՝ նրանք փողոցի լայնութիւնը կտրելով դանդաղ քայլերով հասան հացթուխի խանութը:

Խանութի լուսամուտի վրայ դբած էր մի կտոր հաց, երեւի սյգ վայր էր ձգել մի փոքր երեխայ, իսկ անցորդները վերցրել ու դրել էին լուսամուտի վրայ, որ անցորդներէ

ստերի տակ չը արորուէր: Մեծ եղբայրը տեսածին պէս, ճիշտ վայրենի գազանն նման, ընկաւ այդ մի կտոր հացի վրայ, երկու կէս արաւ, մի բաժինը եղբօրը տուեց ու աչքերը դէս ու դէն ձդեց, թէ արդեօք իրանց ոչ ոք չի նայում և ճանաչելով իրանց ուսուցչին, թողին փախան:

— Պետրոս, Յովսէփ, ըզաւուժ էր նրանց քամակից կենիգոգորֆը. բայց ի զո՛ւր: Երկու եղբայրները այնպէս անյայտացան, ինչպէս սատանաներ, մինչև անգամ յետ էլ չը նայեցին: Այդ վայրկեանին երիտասարդ ուսուցիչը գոտարանում էր սրռչել, թէ նա արդեօք աւելի կարեկցութիւն, խղճահաւութիւն, թէ տհաճութիւն ու անբաւականութիւն է զգում . . . Վերատեսուչը ճիշտ է նկատել. այդպէս երկար չի կարելի շարունակել:

Ճաշարանու՞ սպասածից աւելի երկար նստեց. և որպէս զի մի քիչ մտածմունքները կարողանայ իրանից հեռացնել՝ սկսեց պատկերազարդ շարաթատթերթերը թերթել: Ընթերթը նրան դուր չեկաւ, իսկ երկու եղբայրները ընաւ գլխից զուրս չէին գալիս: Տուն վերադառնալիս բարձրացաւ սաստիկ ցուրտ ձիւնախառն քամի:

«Տէլխշտրատսում» նրան հանդիպեց կոպիտ դէմքով հարբած մի մարդ. նա երգում էր մի շատ անվայել երգ, ու օրօրուելով այս ու այն կողմ, վերջապէս ըսնեց իրան ուղեկցող կնոջը. այդ Մերկերի մայրն էր, նա ճանաչելով ուսուցչին, երեսը շուռ տուեց միւս կողմը:

— Երգի՛ր ինձ հետ. փնթփնթաց տղամարդը. քեզ ասում եմ երգի՛ր ինձ հետ: Բայց նա չէր երգում. ամօթից նրա դէմքը սաստիկ կարմրած էր: Այդ գիշեր ուսուցչի աչքերին քուն չը մօտեցաւ. և ըոլոր ժամանակ նա լսում էր կատաղի քամու սաստիկանալը. նա չը դադարեց երկու եղբայրների վերայ մտածելուց, սրտնք այսպիսի ցրտաշունչ եղանակին գիշերելու էին բաց երկնակամարի տակ: Մինչև անգամ նա անհանգստութիւնից գիշերը երեք անգամ անկողնիցը վեր կացաւ, բաց արեց լուսամուտը. փողոցի այս ու այն կողմը նայեց, բայց այնտեղ միայն գիշերային պահապանն էր խանգարում կէս գիշերուայ կատարեալ մեռելային լռութիւնը: Ուսուցիչը միայն լուսարացին կարողացաւ քնել: Նրան երազում պատկերանում էին անհամար մանր հացի կտորներ, գրուած լուսամուտների վերայ. հաստ ցեխով ծածկուած տետրակներ. անվայել երգ երգող հարբածը, որը այնպէս կեղծ խուպսա ձայնով էր երգում, որ քնից նայն բոպէին զարթնեց կենիգոգորֆը, թէպէտ դեռ շատ վաղ էր վերկենալու. բայց նա խկոյն ան-

կողնից վեր կացաւ ու հագաւ շորերը: Իր խնդրանօք տիկինն
 Կլէյն աւելի շուտ սուրճ բերեց, այնպէս որ մինչև դպրոց դը-
 նալը նա կարողացաւ հեռանալ նամակը գրել:

Յարգելի պ. Մերկ:

Դուք ինձ յատուկ պարտաւորեցրած կը լինիք, եթէ որ
 բաւականութիւն պատճառէք ինձ ձեր ներկայութեամբ: Հարցն
 այն է, որ պէտք է կարողանանք միջոցներ գտնել ձեզ տուգան-
 քից ազատել՝ ձեր որդիներն ըստ թողած դասերի համար. ան-
 հրաժեշտ է, որ ձեզ հետ այդ մասին խօսեմ. խնդրում եմ
 առանց քաշուելու շնորհ բերէք մօտս:

Ձեր բարեկամ ու սուցիչ Կենիգսդորֆ:

Ճանապարհին ինքը իր ձեռքով նամակը փոստարկղ ձգեց,
 որպէս զի ապահով լինի, թէ չի կորչել:

Հասկանալի է, որ երկու եղբայրները դպրոցում չէին լի-
 նելու. ինչպէս և դպրոցի ծառան: Երկար գառամիջոցին մի
 բան ուտելու համար ուսուցիչները հաւարուեցին ուսուցչա-
 նոյ: Խօսակցութեան առարկան Մերկերն էին. բայց դպրոցի
 ծառայի յանկարծ ներս մտնելովը ընդհատուեց:

— Դէ՛ շուտ ասա՛, ձեզ յաջողուեց՝ աշակերաններին բռնել
 խմբովին հարցքն ուսուցիչները:

Բռնելը՝ ես բռնեցի նրանց. ասաց ձերը երեսի քրտինքը
 սրբելով, բայց ափսոս այդ աւազակութիւնը արդէն ժառան-
 դական է:

— Ո՛ւր են երեխաները. — Հարցրեց Վիրբելը, որը չափա-
 զանց սիրում էր իրան ներկայացնել վերատեսչի օգնական:

— Ուր են. անամօթները փախան, կասկած չկայ, փախան:

Ուսուցիչներն բարձր ձայնով քչքչալը ձեր ծառային տակի
 կատաղացրեց:

«Բայց ո՛չինչ. ինչ էլ որ լինի, ես այդ անպիտաններին կը
 բռնեմ. ճիշտ խօսք եմ ասում, կը բռնեմ: Ես արդէն հոտը
 առել էի, թէ նրանք որտեղ էին գիշերելու և ես ուղիղ իր ժա-
 մին այնտեղ էի. չէ՞ որ ձեզ լուր յայտնի է, թէ ես ո՛ր աստի-
 ճանի կարգապահ եմ. . . բայց կարծես գիտամօք կահաւո-
 րուած սայլը իր ժամանակին գործից չէր վերադարձել. դրա
 համար էլ երեխաները հաւանօրէն մի ուրիշ տեղ պէտք է գի-
 շերէին: Ուստի քայլերս ուղղեցի դէպի գետի ափին շինուած նոր
 շինութիւնը: Յանկարծ կարծես գետնի տակից իմ առաջ բուռ-
 նում են երկու եղբայրները. ինձ տեսնելուն պէս, ինչպէս հրա-
 ցանի գնդակներ, թռան անցան: Ես վազում եմ նրանց քամա-
 կից, կարծես մեղաւորներն հողիներն ուրբուական լինէին: Մեր

հանդէպ դալիս էր մի մտազործ. «բռնէք, բռնէք» կանչում եմ օգնութեան. մտազործը ինձ հասկացաւ. տարածեց երկար թևերը ու կարեց նրանց ճանապարհը. ուրեմն առաջից մտազործը իսկ յետևեց ես և կարծես թէ արդէն նրանք որոգայթի մէջ էին ընկած. բայց աււ՛ղ. երբ մենք բաւականին իրար մօտեցանք, մեծը բռնեց փոքրի ձեռից ու սկսեց երկաթուղու գծերի վրայից քաշ տալ դէպի դետը: Եւ ի՛նչ էր կարծում մեծ եղբայրը մի ակնթարթում հասաւ դետի ամիը և ուղիղ սառը՝ դետի մէջ թռաւ ու լող աւելց դէպի միւս ամիը:

«Ի՛մ յետևից, Յովսէփ, ի՛մ յետևից»... ըզուում էր նա և ինչպէս մի ձուկ մի բոպէում լողաց դետի կէսը:

— Եւ նա իրան ջո՛ւրը ձգեց:

Մինչև անգամ առանց տատանուելու. բայց նա յոյս ունէր, թէ փոքր եղբայրն էլ իր յետևից կը թռչի. իսկ փոքրը ինչպէս երևաց, այնպէս ազատ լող տալ չը գիտէր. դրա համար էլ կանչեց:

«Պետրոս, Պետրոս»... ինձ այնպէս էր թւում, որ սա էլ վերջ է վերջոյ պիտի վճռէր եղբորը հետևել. շնայելով որ մեծ եղբայրը լողալով միւս ամիին բաւականին մօտեցել էր, սակայն լսելով եղբոր աղաղակը և տեսնելով, որ ես նրան արդէն բռնեցի եմ, նա... ,

— Ի՛նչ, վերագարձա՛ւ, բացահանչեց Կենիգոսօրֆը, որի դէմքը ուրախութիւնից փայտում էր:

— Այո՛, վերագարձաւ: Այդ միջոցին մտազործի շունն էլ, որ սայլից կապած էր, փախչում էր. նա էլ շան յետևից ընկաւ նրան բռնելու համար. իսկ ես մենակ փոքր եղբոր հետ սկսեցի տանջուել: Նա ընկաւ գետնի վերայ ու սկսեց ոտնեւորով ինձ քացի քացի տալ: Մեծը ազատ կերպով կարող էր փախչել ազատուել, իսկ նա ընդհակառակը թրջուած դուրս եկաւ դետի ամի, յարձակուեց իմ վերայ ու սկսեց իմ ձեռները կծոտել. այդ յաջող բոպէից օգտուեց փոքրը, ոտի կանգնեց և Աստուած իմ, ինչպէս էր փախչում: Նոյն միջոցին արդէն մեր չորս կողմը հաւաքուել էին բանւոր մշակները և տեսնելով թրջուած երեխային ու լսելով նրա աղիողորմ աղաղակը, նրանք սկսեցին աղմուկ բարձրացնել, որ ես լսեղձ աղային բաց թողնեմ: Մինչև անգամ նորանցից մէկը այնպէս ամուր հարուած հասցրեց կրծքիս, որ ես հազիւ հազ կարողացայ ոտի վրայ կանգնել մի ուրիշն էլ այդ բոպէին լսեց երեխային ձեռքիցս և մինչ ես այդ յիմարին բացատրում էի, թէ բանը ինչու՛մն է, երկու եղբայրներն էլ մեր աչքերից արդէն հեռացել, անյայտացել էին: Այդ ամենից յետոյ գիւղացիներն էլ

նաւակի մէջ տեղաւորուելով, նաւակը թիւփարեցին դէպի միւս ափը:

Եւ ոչ ոք չէր հարցնում, թէ ո՞վքեր են նրանք և կամ ի՞նչպէս են անուանում նրանց: Յայտնի բան է՝ նմանը իր նմանին է սիրում: Բայց թող մէկ էլ ընկնեն իմ ձեռք, ես ցոյց կը տամ նոցա:

— Ասել է, Մերկերը դարձեալ անյայտացան, հարցրեց վերատեսուչը, ներս մտնելով սենեակ:

— Ի հարկէ պ. վերատեսուչ. և ես ձեզ հաւատացնում եմ նորանցից մեծը իսկական...:

— ձիշտ հերոս է. — ըտլորսլին լուրջ ընդհատեց նրան Վե- նիգսդորֆը: Բայց ծիծաղը եղաւ նրան պատասխան:

— Ի հարկէ հերոս է. այդ երեսայի մէջ կայ աւաղակայլին խմբի խմբապետի անհատականալի հակում՝ եթէ մենք նրան շարտենք դէպի սխալ ճանապարհ, և կամ նշանաւոր լաւ մարդու յատկանիշ՝ եթէ կարողանանք նրան ուղղել և բարոյապէս դաստիարակել:

— Դուք... դուք անգրգուելի գաղափարական էք. Պ. Վե- նիգսդորֆ: — առայ վերատեսուչը. — Դէ՛հ, պարսններ, արդէն զանգակը խիեց... խօտակցութիւնը վերջացաւ: Դո՛ւ, ծերուկ, սպասիր ու մանրամասնօրէն պատմիր ինձ, ինչպէս որ եղել է. ես կարծում եմ վերջ ի վերջոյ պէտքէ դիմել սոսիականութեան:

Ուսուցիչներից ամեն մինը գնաց իր դասարանի խաղերի հրապարակը—սրահը, իսկ ծերուկ ծառան սկսեց վերատեսչին ցոյց տալ փաթաթած ու կծոտած ձեռները:

III.

Ճաշից յետոյ դպրոցում կրկին առաջացաւ նոր և աւելի ուժեղ իրարանցում: Երկարահասակ, վտիտ ու անճոռնի Կոն- դրատին՝ վերատեսչի դասարանի աշակերտներից մինը, գեովաղուց Վենիգսդորֆի չար աշակերտների հաշուում եղած, զանազան մանր մունր լրատեսիլներին համար ներկայացաւ նրան, ցոյց տուեց իր ուռած աչքը: ձիշտ որ գուրս էր ընկել մի մեծ ընկոյզի չափ ուռոյցք, որը պատճառել էր ոչ այլ ոք եթէ ոչ «աւաղ Մերկը» որպէս պատասխան իր և ըտլորի փոխարէն:

— Ինչո՞վ նա քեզ խփեց:

— Փայտով. հիմիկուանից այլևս նա առանց ձեռնափայտի ման չի դալիս, իսկ գրպանները միշտ էլ լիքն են քարերով:

— Այդ ո՞րտեղ պատահեց:

—Շտերնի գործարանի պատի տակ:

—Իսկ նա այնտեղ ի՞նչ էր անում:

—Պատի մօտ տաքանում էր, որովհետև բոլորովին թըջուած էր:

—Նա ի՞նչպէս կարող է տաքանալ ու շորեր չորացնել պատի մօտ կանգնելով:

—Որովհետև վառարանը շինուած է պատի քամակին և այնքան շատ են վառում, որ պատը դրոսից միշտ էլ տաք է լինում:

—Ինչո՞ւ համար նա քեզ խօսեց:

Երկարահասակ, վախ ու անճոռնի Կոնդրատին լռեց. խի միւս աշակերտը նրա փոխարէն պատասխանեց, «որովհետև դա բոլոր ժամանակը Մերկին տաք պատից քաշքաշում էր և վերջն էլ շորը պատառեց»:

—Ինչո՞ւ համար էիր դու քաշքշում Մերկին և ինչո՞ւ պատառեցիր նրա շորը:

—Ես ուզում էի բռնի, քաշելով դպրոց բերել:

—Ժամը քանիսը կը լինէր:

—Ժամը տասներկուսից մի քիչ անց էր:

—Իայց չէ՞ որ տասներկուսից յետոյ դպրոցում պարապմունք չկայ:

—Եւ քո ինչ բանն էր նրան քաշքաշելով դպրոց բերելը. չէ՞ որ դորա համար դպրոցական ծառայ կայ:

—Եթէ Մերկը իրան պաշտպանել է և դու էլ նրա աղքատիկ շորը պատառել, նա քեզ հետ այդպէս վարուելու իրաւունք ունէր: Իսկ այսուհետև, ով նրան անհագիտ կանխ և փողոցում նրա յետևից կընկնի, կամ կը քաշքաշէ նրան, ես այդպիսիներէ հետ այլ տեսակ կը խօսեմ:

—Հասկացա՞ք. այժմ կարող է՛ք հեռանալ:

Իրիկուայ փոստը Կենիգսդորֆին բերեց մի նամակ հետեւեալ բովանդակութեամբ:

Յարգելի ուսուցիչ.

«Այսօր առաւօտեան դուք իմ տղային հայհոյել ու խայտառակել էք միայն նրա համար, որ գարշելի Մերկը քիչ է մնացել ուղուս աչքը հանէ: Իմ որդին մինչև անգամ փոքրիկ վառեկին էլ ձեռք չի տայ, իսկ Մերկերը ծնուած օրից եղել են աւազակներ: «Խնձորը խնձորենուց հեռու չի ընկնում»։ Եթէ դուք միւս անգամ իմ տղային կը վիրաւորէք, ես նրան կը հանեմ և կըտամ ուրիշ բարձրագոյն դպրոց. ես թէև մի թշուառ այրի կին եմ, բայց առանց ձեզ էլ կարող եմ ապրել»:

Յարգանք Տիկին Գօնրադի

Վիրաւորուած մայրական զգացմունքի այս հեղեղը Կենսի-
գըսգորֆի ակտորժակը շխանգարեց: Մերկերի հօրը սպասելու
պատճառով այս երեկոյ տանը ընթրիք արաւ:

Բայց նա իզուր էր սպասում, նրանց հայրը չեկաւ:

Երբ որ և իցէ մէկին անուանում են գաղափարական, այդ
շատ հազուադիւտ դէպքերում կը նշանակէ գովասանք. իսկ
շատ անգամ այդ արտայայտում է մեղադրանք անլրջութեան
մէջ, միայն թէ աւելի փափուկ ձևով: Գոնէ այդ տեսակին էր
պատահանում ընկերների վերաբերմունքը դէպի Կենսիգսգորֆը:
Ծանօթները նրան համարում էին լաւերից մէկը. բայց ոչ գործնա-
կան մտածող, որի համար էլ կեանքի շատ դէպքերում պիտի
խղճահարուէր:

Երկու անխնամ երեխաների ջերմ պաշտպանութիւնը
թէև չը փոխեց հասարակութեան բարի կարծիքը նրա մասին
բայց մի քանի ընկերների հետ լարուած յարաբերութեան պատ-
ճառ դարձաւ:

Հետևեալ առաւօտ դպրոցում ոչ մի նորութիւն չկար,
եթէ չը հաշուենք այն, որ ծերուկ Ռեխտերը երկինք—գետինով
էր երգում, որ անպատճառ այդ սրիկաներին դպրոց կը բերի:

Կենսիգսգորֆը իզուր տեղ էր սպասում ծեր Մերկին, այդ
պատճառով էլ նա կրկին աւելի քաղաքավարի նամակ գրեց և
ուղարկեց ապահովուած ձևով:

Գիշերը սաստիկ ձիւն էր եկել. և հետևեալ առաւօտեան
երեխաները ձնթօփ էին խաղում և ձնթօփը հենց բռերի մէջ
հալում էր. դուրսը խոնաւ էր և պաղ ձիւնակոյտերը երբեմն
երբեմն վայր էին թափւում, իսկ ջուրը ամենապինտ կօշիկից
ծծւում էր, գրա համար էլ դպրոցը գրաւիչ և տաք էր թը-
ւում:

Յանկարծ դռան գրսի գանգը զիւ հնչեց. գրա յետևից
դռան մօտ լսուեց սարսափելի աղմուկ՝ աղաղակ. վերատեսչի
շիկահեր աղախիւնը բանալով դուռը բարձր ճշաց:

— Այս ինչ է, միթէ կարելի՞ է:

Կենսիգսգորֆը իսկոյն դասարանից դուրս թռաւ, և մինչև
անգամ մոռացաւ յետևից դուռը փակել: ձիւտ որ . . . դռան
մէջ կանգնած էր ծեր ծառան ու ամեն մի ձեռքով բռնած ու-
նէր մի մի երեխայ, մինը աջ և միւսը ձախ, որոնք սաստիկ բը-
ղաւում էին աշխատելով ձեռքից ազատուել, իսկ փողոցում
դպրոցի առաջ արգէն հաւաքուել էին կաթ ծախողները, հաց
մանածողները, պառաւ կանայք ու բարձր-բարձր անիճում:

Ծեր ծառան միանգամից չէր կարող երկու աղայքնէլ ներս

բրթեւ, որոնք դանաղան կողմեր էին բաշքշում, բայց անսնելով
 Կենսիգոթօրֆին, որ որպէս թէ իրան օգնութեան է հասնում, նա
 փոքրին ուժով ներս բրթեց, ապա ձեռներով շղթայեց մեծին,
 գէ՛մ տալով դռան՝ նրան էլ նախադուրիթ մտցնելու համար:

Պոքը եղբայրն ընկնելով նախադուրիթ սալայատակի վրայ
 քերծուեց, արի՛նք կամաց կամաց երևաց և շնայելով զրան
 փորձում էր ուսուցչի մօտից կամացուկ փախչել. դուրս գալով
 միւս հակառակ կողմից, որը դուրս էր գալիս բակը՝ սահայն
 Կենսիգոթօրֆը բռնեց նրա օձիքից, թափ տուեց, ուշագրութիւն
 չը գարձնելով նրա ուժեղ զիմադրութեանը և դասարան քա-
 շեց, սրտեղ աշակերտները վախից գունաթափուած սպասում
 էին, թէ ի՞նչ կը լինի զրա վերջը:

Գրտում մի քանի փողոցային աղաներ ծիծաղելով շուաց-
 նում էին մատների միջից: Շնեքը հաչում էին. պառաւ կա-
 նայք հայհոյում, մի կողմից էլ ջրախառն ձիւնադնտերը նա-
 խադուրի ներսի պատերին դիպչելով կտոր-կտոր էին դառ-
 նում. այդ գրութեան մէջ աղախինը խելացիութիւն արեց
 ծածկեց դուռը և շղթան ձգեց. նա չը մոռացաւ բակի
 դուռն էլ փակել, որովհետև աւագ եղբայրը թաւալոււմ էր
 յատակի վրայ և դեռ չէր կարելի հաւատալ, որ ձեր ծառային
 կը յաջողուի նրան դասարան բերել, իսկ ընդդիմութիւնը ծե-
 բուկի կատաղութիւնը շատացնում էր. նա երեխային վեր բարձ-
 րացրեց և մի լաւ ձայնով ապտակ հասցրեց ու բոլոր ուժով
 դասարան շարտեց:

— Ահա՛, այդպէս, սրիկաներ, շներ, ըզուեց նա և դրպա-
 նից հանելով ամուր ոլորուած պարանի կտորը՝ ծայրը մի ձեռ-
 քին կապեց ու բռնելով մեծի վզակոթից թռաւ կանգնեց ա-
 ռաջի նստարանի վրայ ու պատրաստուեց ծեծելու:

— Ես ձեզ ցոյց կտամ, թէ ի՞նչպէս պէտք է:

— Զը համարձակուես ծեծել, բարկացած ձայն տուեց երի-
 տասարդ ուսուցիչը. բայց արդէն ուշ էր, նոյն ըսպէին խփեց
 առաջին դասի դանդակը:

— Բեխտեր, կըլնում եմ, չհամարձակուի՛ս ծեծել.

Սահայն ձերուկը այնպէս էր կատաղել, կարծես ոչինչ չէր
 լսում:

Նորից թօկը պտտացրեց, իսկ երեխան գոռում, գոչում
 էր՝ կարծես կտոր կտոր էին անում նրան:

Ճարպիկ շարժումով Կենսիգոթօրֆը խլեց ձերուկի ձեռքից
 պարանը ու սաստիկ բարկութիւնից շարտեց յատակի վրայ:

— Չհամարձակուի՛ս, այստեղ մեծը ես եմ. միայն ես ...
 կ'ըրե՛ր, հեռացի՛ր այստեղից:

Ու պարզելով ձեռքը, ցոյց տուեց դուռը: Քարկութիւնից ամբողջ մարմնով դողում էր:

— «Արո՛ն, ... պարոն Կենիգսդորֆ:

— Քեզ ասում եմ՝ դո՛ւրս կորիւր:

— Մի ակնթարթում ծերուկը փայտ դարձած կանգնեց իր տեղը և սպա դուրս գնաց:

— Ա՛յ քեզ բան. դաւթումն ինքն իրան փնթ փնթում էր նա:

— Անիծած, գոռոզ ուսուցիչ:

Կենիգսդորֆը մի ըսպէ տկանջ զրե՛ց և լսելով այդ խօսքերը բարկութիւնից նախագաւթի դուռը վրայ խփեց ու այդպէս ազատուեց ծառայից:

Հենց նոյն բղաւող երեխան, որը բոլոր ուժով բղաւում, ճղղում էր, ըսպէսպէս ձայնը կտրեց. վախը սրտում՝ անհաստալի, ուռած աչքերով նայում էր ուսուցչի վրայ, որը դեռ գնում գալիս էր դասարանական գրատախտակի և ուսուցչական պահարանի մօտ:

Փոքր Մերկը միանգամից անսպասելի կերպով թռու դէպի դուռը և ուղում էր փախչել, բայց ուսուցչիչը իր ժամանակին յաջողեցրեց բռնել նորա օձիքից և մի ձեռքով օդի մէջ բարձրացրեց:

— Անհնազանդ երեխայ, ասաց նա բարկութիւնից դողողալով և սաստիկ գրգռուելուց ցնցեց երեխային բոլոր ուժով. անպիտան երեխայ:

Յետոյ նա դրեց գեանի վրայ և դուռը փակեց, բանալիքը գրպան դրեց: Լուսամուտները բաւականին բարձր էին, այնպէս որ փախչելու ամեն տեսակ յարմարութիւն կարուած էր. դրանում մեծ եղբայրը համոզուած լինելով, բոլորովին կուշեկաւ, որը դեռ դողողում էր այնուհետև աչքերը իր համար բաւականին անյարմար, ծակու կոպիտ կօշիկներից չբարձրացրեց, որոնց մէջ ձեան ջուր էր լցուած: Նոյն ըսպէին նրա դէմքը հապտած ու թռուած էր: Քիթից բերանը, բերանից մինչև գունչը ձգուած էին տանջանքի խորը ահօսներ: Փոքրիկ եղբոր ատամները ցրտի աղդեցութիւնից չէին դադարում կրճատուց բայց և այնպէս նա դեռ ցաւում էր եղբոր վրայ: Կծկուած իրանց տեղերում առանց արտասուելու, լուռ ու մունջ կանգնած էին իրար մօտ, ինչպէս երկու դասապարտուածներ, որոնք ոչ մի կողմից չեն սպասում ներողամտութեան: Լռութեան մէջ էր ամբողջ դասարանը. ոչ ոք տեղից չէր շարժում, կարծես ամեն միւր իր տեղում մեխուած լինէր:

Երևի հենց հիմա մի բան կը կատարուի... բայց իսկապէս ի՞նչ. բոլորն էլ կարծես դժուարութեամբ էին շունչ բաշում:

Լուսամուտի զրսի կողմից երևում էր մի փողոցային և լե-
խայի գլուխ, որը կարողացել էր յաջողայնել բարձրանալ շըր-
ջանակի վրայ տեսնելու ու լսելու համար, թէ դասարանում
ի՞նչ է կատարուում: Առուցիչը մտեցաւ. փողոցային աղան
խիոյն վայր թուաւ վանդակապատից գետին և փախաւ փողո-
ցի անկիւնից. սակայն գետ մի քանի յոպէ էլ լսում էր նրա
ծամած ու թիւնների շփոցը: Առուցիչը դասարանի մէջ մանդա-
լը գետ շարունակում էր:

Նա երեխաներին չէր նայում, չէր ցանկանում տեսնել
նրանց: Պարանի կտորը գետ յատակի վրայ էր. նա ստով դի-
պաւ պարանին:

Իսկ եթէ նա պարանը վերցնէր կամ կամացուկ ձեռք տար...
ոչ, ոչ. նա գետ բաւական վրդովուած է. գետ պէտք է հան-
գըստանայ... վերջապէս ամբիոնի վրայից վերցրեց գիրքը ու
շարունակեց Աւետարանի ընդհատուած բացատրական ընթեր-
ցանութիւնը:

«Յիսուսի մօտ բերին երեխաներին, որ նա օրհնէ նրանց,
«ձեռք դնէ նրանց վրայ. իսկ աշակերտները սաստում էին նրանց,
«որոնք բերում էին: Յիսուս տեսնելով այդ, բարկացած յանդի-
ւմանեց և ասաց. թոյլ տուէք մանուկներին, որ ինձ մօտ գան
«և մի արդէլէք, քանի որ այդպիսիների համար է արքայու-
թիւնը»:

«ձիշտն եմ ասում ձեզ, ով որ ինչպէս մանուկ արքայու-
թիւնը չի ընդունիլ, նա արքայութիւն չի կարող մտնել:»

«Նւ իւր գիրկն առնելով ձեռը զրեց նրանց վրայ և օրհնեց
նրանց»: * Նա կարգում էր խրպոտ, կարծես ոչ իր իսկական
ձայնով: Վերջացնելուց յետոյ կրկին գիրքը զրեց ամբիոնի վրայ:
Նա տեղից վեր չկացաւ, ինչպէս սովորաբար անում էր, այլ
նստած մնաց իր տեղում և աչքերը Աւետարանից չէր հեռաց-
նում:

Բոլոր աշակերտները լարուած ու շաղբութեամբ նայում
էին երբեմն առուցիին, երբեմն երկու Մերկերին, որոնք գետ
և ս կանդնած դասարանում նայում էին յատակի վրայ վայր ըն-
կած պարանին:

— Թո՛յլ տուէք մանուկներին, որ ինձ մօտ գան և մի՛ ար-
դէլէք նրանց. քանի որ այդպիսիների համար է Աստուծոյ ար-
քայութիւնը. մի քիչ լռելուց յետոյ երկրորդ անգամ կրկնեց
առուցիչը և հաւաչելով սրտանց ախ քաշեց:

Իր տան հասարակ գրասեղանի մօտի պատից կախած էր

*) Մարկոս. Աւետ. Գլ. Գ. Հ. 13. 14. 15. 16.

Յիսուսի պատկերը, Արը օրհնում էր մանուկներին. մտաբերեց այդ պատկերը. շատ և շատ անգամ ինքը այդ պատկերի վրայ էր կենդրոնանում. մանաւանդ երբ դպրոցում այսպէս թէ այնպէս ճնշուած էր դիմում իրան: Այո՛, յաճախ էր նայում. ամբօրին մէջ կային ոտաբոսիկ, հիւանդ մանուկներ և Յիսուս նրանց էլ էր օրհնում: Մայրերը բերում էին նրանց իրանց Մեծ Բարեկամի մօտ թէ հասակաւորներին և թէ մանուկներին. մայրերը խոստովանում և հաւատում էին նրան:

Իսկ այժմս երիտասարդ ուսուցչի առաջ կանգնած էին երկու թունաւորուած օժեր. ընկերների կողմից հայածուած, դողդոջուն, քաղցած, մերկ երեխաներ, որոնք համարեա մայր չուենէն. ի սկսպէս չուենէն, դոնէ այնպիսին, որ կարողանար հասկանալ Փրկչի խօսքը և որը կարողանար հետեւել ցոյց տուած փրկութեան ճանապարհին:

«Թոյլ տուէ՛ք մանուկներին, որ դան ինձ մօտ և մի՛ արգելէք նրանց, քանի որ այդպիսիներին է Աստուծոյ արքայութիւնը», նորից բարձր առողանութեամբ ու ջերմ զգացմութեամբ շեշտեց ուսուցչի այդ սուրբ խօսքերը, այնպէս որ երեխաները առանց բացառութեան երկու եղբայրների, զարմացած բարձրացրին իրանց դուռները ու հարցական ձևով նայում էին ուսուցչին:

Կենիդսդօրֆը վեր կացաւ տեղից, նա հիմա իրան տիրում էր:

— Պետրո՛ս, ասաց նա. վերցրո՛ւ պարանը:

— Երեխան կուանալով վերցրեց ցեխոտ պարանի կտորը:

Ա՛յ, ա՛յ, հիմա էլ սա կոկոսի. երեխայի մարմնով ըսպէսբար անցաւ պաղ ստրսուռ և նա աչքերը ուսուցչի վրայից չէր հեռացնում յուսահատութեան և երկկեղի մէջ ընկած:

— Չգի՛ր պարանը վառարանի մէջ:

— Երեխան իր կանգած տեղում պահած ու աչքերը ուսուցչի վրայ չուած, չէր ուղում հասկանալ, թէ նա ի՞նչ է ասում:

— Ես քեզ հրամայում եմ՝ պարանը վառարանի մէջ ձգիր:

— Այո՛ . . . թո՛կը, պարանը:

— Այո՛, բաց վառարանի դռնակը կրակխառնիչով, եթէ ոչ չափազանց տաք է:

Վառարանը գտնւում էր դասարանի հակառակ կողմը, դրա համար աշակերտները գլուխները այն կողմը չուռ տուին, վառարանի դուռը բաց էր . . . բոցերը երևում էին: Մեծ եղբայրը գեռ անորոշութեան մէջ էր, կրկին անգամ ասարակուսութեամբ նայեց ուսուցչին: Չգի՛ր պարանը: Փոքրիկ, դունաստ աղայի նեղիկ կրճքից դուրս թռաւ խոր հաւաշանք:

Բոցերը պարանը լափեցին, որ տաքութիւնից կծկուեց ինչպէս օձ:

Պետրոսը վերագարձաւ և տռաջուայ պէս կանգնեց իր նզբօր մօտ աշակերտների առաջ. նա ոչինչ չասաց: Բայց նրա աչքերից արցունքները առատ առատ հոսում էին, խոշոր, անբնդհատ ու լուռ . . . նա մինչև անգամ արտասուքը չէր սրբում: Ամբողջ դասարանը գեռ ևս գանձում էր նոյն քարացած վիճակի մէջ և չէր լսում ոչ մի ծպտուն:

Հիմա—հիմա, երեի, կորոշուի երկու մեղապարտների դատաւրճիւր:

Ճնճուկները, որոնց համար ուսուցիչը ձմեռ ժամանակ փշրում էր լուսամուտի առաջ հացի փշրանքներ, այժմ էլ բնազդմամբ թոչկոտում էին սովորած տեղը և ինչ որ կարծես ճըթճըթում էին վատ ժամանակների մասին, որ այսօր իրանց վրայ ոչ որ ուշք չը դարձրեց:

Մինչև անգամ նուագածուն, որն անսպասելի կերպով փողոցում նուագեց բոլորին յայտնի երգը դարձնալ չկարողացաւ խանգարիլ դատարանական մեռելային լուսթեան ներդաշնակութիւնը:

— Իսկ հիմա ասացէք, թէ ինչո՞ւ համար դուք միշտ դըպրոցից փախչում էք, Յովսէ՛փ, պատասխանիր:

Այդ հարցին փողբիկ Մերկը չը կարողացաւ պատասխանել. սկզբում մեծն էլ չը պատասխանեց:

— Միթէ փողոցում դպրոցից աւելի՞ տաք է:

Պետրոսը սաստիկ դողաց, իսկ յետոյ խորին համոզմամբ պատասխանեց. «Ի հարկէ դպրոցում աւելի տաք է, բայց մենք վախենում ենք»:

— Իսկ տուն ինչի՞ համար չէլք գնում:

— Մենք վախենում էինք:

— Պետրո՞ս, երբ դու միշտ ողորմութիւն էիր խնդրում և երբ անցուդարձ անողները քեզ հարցնում էին. ո՞վ ես, դու միշտ պատասխանում էիր, թէ ծնող չունիս:

— Այո՛: Իմ մայրը . . . իմ մայրը . . .

— Յետո՞յ:

— Իմ մայրը . . . նա լցուեց. չը կարողացաւ վերջացնել, միայն հանդարտ արտասուեց:

Կենդանուրջը այլևս այդ հանդամանքի վերաբերմամբ հարց չառաջրկեց. նա դրաց, որ առանց այն էլ շատ հեռուն գնաց:

Այո, իսկապէս այդ երեխաները ծնողներ չունէին. ռ՛չ հայր և ոչ մայր:

Մայրը նրանց մէջ տեսնում էր իր մատնիչներին, հակա-

ուսկորդներին և դրա համար էլ նրանց հալածում էր, իսկ հայ-
րը երեկոները միշտ էլ հարբելով՝ կնոջ կակճից նրանցից էր
վրէժ առնում: Նա ծեծում էր անբաղդներին, մինչև որ
նրանցից արիւն կը հոսէր, դրացիներին ասելով:

— Դու պատի տակ ի՞նչ էիր անում, երբ Կօնդրատի աչ-
: տակին կապոյտ նշան թողիր:

— Ես ուղում էի չորանալ, իսկ նա ինձ քաշքշում էր.

— Միթէ թըջուած էիր:

— Այո, ես . . .

Նա շփոթուեց, բայց յետոյ ճարպիկութեամբ ստեց . .
եւ . . . եւ . . . ջուրը ընկայ:

— Ի՞նչդ ընկար, թէ քեզ ձգեցին:

Մերկը երկիւղից աչքը ձգեց դաստիարակի վրայ ու գը-
լուխը կախ արեց. նա հասկացաւ, որ ուսուցիչը ամեն ընդ
է իմանում:

— Ցատկեցի, ասաց նա.

— Ինչո՞ւ էիր գողանում, նարինջներ և պղտիկ սպիտակ
կոլոր հացեր, և վերջապէս կարմիր ու խոշոր խնձորներ . . .

— Յովսէփը քաղցածութիւնից լալիս էր:

— Դու ինքդ էլ քաղցած էիր:

— Այո՛, ես ևս:

— Այդ ամենը այնպիսի տոնով էր հնչում, որ այլևս ամե-
նափոքը կասկած անգամ չը մնաց այդ խօսքերի ճշմարտու-
թիւնը ստուգելու համար.

— Այժմ էլ քաղցած ես:

Երեխան փոխանակ հարցին պատասխանելու գլխով արաւ
ու նրա դեղնած, գունաթափ դէմքի վրայից կրկին արտասուն-
քի կաթիլներ գլորուեցին:

— Դու վերջին անգամ երբ ես ճաշել:

— Այն օրը, երբ մայրս . . .

— Եւ նա նորից լցուեց:

— Իսկ մինչև այսօր չե՞ս ճաշել:

— Ո՛չ, երկու անգամ ճաշել եմ քեռուս մօտ. նա մեզ կա-
մեցաւ տուն տանել դրանից յետոյ՝ մենք այլևս նրա մօտ
չէինք գնում:

Երեխաները նախադատում էին քաղցած մնալ, միայն թէ
ճնողներին մօտ չը վերադառնան:

— Յովսէփ, դու էլ քաղցած ես, հարցրեց Կենիդսօրֆը
փոքրիկ Մերկին:

Սա նոյնպէս շտապով գլխով արեց և պատրաստ էր

ձեռքը ընկածը կուլ տալ: Կենիգսդորֆը իր նախաճաշիկը բա-
ժանեց երկսի վրայ:

Մի քոպէտու՛մ կերան վերջացրին:

— Դուք հիմա էլ քաղցած էք, չը կշտացա՞ք:

— Փոխանակ պատասխանի նրանց աչքերը փայլեցին:

— Վինգգասուզ, եկ այստեղ, դարձաւ ուսուցիչը հարուստ
մսավաճառի տղային, վաղիւր հօրդ մօտ և տոս՛ նրան, որ այս-
տեղ կան երկու քաղցած ու աղքատ երեխաներ, որոնք արդէն
մի քանի շաբաթ է, որ չեն ճաշել:

Իսկ քո հայրը, Վելտին, չէ՞ որ հացթուլս է: Դու էլ տուն
գնա՛ և նոյնը ասա: Շատ կարելի է, ձեր հայրերը մի բան կը տան
ձեզ ձեր ընեւները համար:

Երկու ընկերներն էլ սուրախութեան ժպիտներով դէպի
դասարանի դուռը վազեցին, բայց փակ դռան:

— Ի հարկ է նրանք դասարանից դուրս գնալ չէին կարող:

— Մերկ, ա՛ռ բանալիքը և բաց դուռը, ու տալով բանալին
Մերկին ինքը գնաց դէպի վառարանը և սկսեց կրակը խառնել,
կարծես թէ իրան երբէք չի հետաքրքրու՛մ այն, թէ ի՞նչ է կա-
տարու՛մ դռան մօտ:

Բայց երեխան ամենափոքր փորձ անգամ չարեց փախչելու:
Նա թողեց ընկերին ապա բարեղխճութեամբ նորից փակեց
դուռը և բանալին յանձնեց ուսուցչին:

— Բաց դուռը և թող բանալիքը մ՛նայ փականքի մէջ:

Պետրոսն այդ էլ ճշտութեամբ կատարեց և ուրախ ուրախ
նայում էր ուսուցչին:

— Այդպէս. այժմ ասացէք ինձ, ի՞նչ փառքի էք արժանա-
ցել ձեր թափառաշրջիկութեան համար: Փոքրիկ Մերկը լուռ
էր, մեծն էլ գլուխը կախ արաւ:

— Դէ՛, Պետրոս, ինձ նայիր. Յսվսէփ, դու էլ սուղիղ աչքերիս
նայիր:

Եթէ դուք ինձ բոլոր սրտով հաստատ և գիտակցաբար կը
խոստանար, որ այլևս անեւու չէք, ես ձեզ կը ներեմ այն պա-
տիժը, որին դուք արժանի էիք:

Կամենու՛մ էք:

Երեխաները թափում էին աղի արցունքներ:

Այդպէս՝ կթէ համաձայն էք, տուէք ինձ ձեր ձեռքը ազնու-
թեամբ ու գիտակցութեամբ:

— Ես խոստանում եմ:

— Ես նոյնպէս:

— Ձեռք ձեռքի տուած՝ դէմ առ դէմ կանգնած էին երեխա-
ները և ուսուցիչը:

—Եւ ձեզ հաւատում եմ, որ դուք ինձ չէք խաբում:

—Երբէք էլ խաբելու չենք:

—Այդ պատասխանի մէջ այնքան վստահութիւն, հաստատ համոզմունք ու բերկրութիւն կար և նրա մէջ հնչում էր այնպիսի թեթևութիւն, որ մինչև անգամ մնացած աշակերտներն էլ այնպէս ակա քաշեցին, կարծես, թէ բոլորն էլ մի ծանր բեռից ազատուեցին:

—Իսկ դուք, աշակերտներ, վկայ եղէք, որ ես Մերկերին ներեցի. նրանք եթէ կամենան կը լինին կարգին, բարի տղաներ ինչպէս դուք էք: Դուք էլ սրանից յետոյ պէ՛տք է նրանց քամակից ընկնէք, հալածէք և կամ ծաղրէք նրանց:

—Ո՛չ, թնդաց ամբողջ դասարանը ինչպէս մի ձայն:

—Ում տանը կը գտնուի աւելորդ շորեր, խնդրեցէք ձեր ծնողներէ, թող ձեզ հետ ճաշից յետոյ ուղարկեն դասարան, երկու Մերկերի համար:

Դուրսը ձիւն է գալիս, իսկ ընկերներդ մըտում են. ցուրտ է այնպէս չէ՞:

—Այո՛, շատ ցուրտ է:

—Իսկ դուք մօտեցէք վառարանին ու տաքացէք. ես միւս աշակերտներին էլ կը պատուիրեմ, որ նրանք էլ ձեզ հանգիստ թողնեն:

Երկու ներուածները կանգնած էին տաք վառարանի մօտ: Այդ ժամանակ դուռը ճռւալով բացուեց և ուրակ ժպիտները երեսներին վերադարձած աշակերտները կանգնեցին ուսուցչի առաջ. երկուսն էլ այնքան հաց, կալբաս-երշիկ էին բերել հետները կարծես մի վաշտ զօրք էին կերակրելու:

Աշակերտներին տուած էր գրաւոր վարժութիւն, իսկ մեր քաղցած երեխաները, որոնց համար սպասում էր շատ առատ և ճոխ նախաճաշիկ, սկսեցին կամաց կամաց վերջացնել եղած պաշարը այն էլ այնպիսի ախորժակով, որ նայողը կը զարմանար նրանց ագահութեան վրայ:

ԵԱՐՈՒՆԱԿԵԼԻ

Թարգ. Նրեմիա վարդապետ

